Հավելված N 4
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 15-ի N 1302 - Ա որոշման

«Մայլեռ» ազատ տնտեսական գոտու ստեղծման

գործարար ծրագիր

2024

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՏԳ	Ազատ տնտեսական գոտի
ԵԱՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԷՆ	Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն
ՀՀ ՊԵԿ	Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե
ՀՀ ՎԿ	Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե
ՀՀ ՖՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. «Մայլեռ» ԱՏԳ ստեղծման նախաձեռնողը և կազմակերպիչ ընկերությունը 4
2. «Մայլեռ» ԱՏԳ ստեղծման նախադրյալները և նպատակը 4
   2.1. ԱՏԳ-ների ստեղծման միջազգային փորձը 4
   2.2. Լեռնադահուկային զբոսաշրջության ներկա իրավիճակը 9
   2.3. ԱՏԳ ստեղծման նպատակը և անհրաժեշտությունը, գործունեության ժամկետները ..13
   2.4. ԱՏԳ տեղակայման հիմնավորվածությունը 16
   2.5. ԱՏԳ տարածքի սահմանագիծը և նկարագիրը 18
   2.6. ԱՏԳ ներկայացվող պահանջները և «Մայլեռ» ԱՏԳ-ն 21
   2.7. ԱՏԳ գործառնական տեսակը և շահագործողների կողմից իրականացվելիք գործունեության տեսակները 22
3. Կազմակերպչի կողմից իրականացվելիք ներդրումները, ստեղծվելիք աշխատատեղերը և մարքեթինգային քաղաքականությունը 23
   3.1. Ներդրումների չափը, ձևերն, ուղղվածությունը և ժամկետները 24
   3.2. Կազմակերպչի կողմից ստեղծվող աշխատատեղերը 26
   3.3. ԱՏԳ միջազգային ճանաչմանն ուղղված միջոցառումները և շահագործողների ներգրավումը 27
   Կազմակերպչի կողմից ԱՏԳ ձևավորման սկզբնական փուլում՝ 2023-2027թթ. մարքեթինգային միջոցառումների իրականացման համար ընդհանուր առմամբ կներդրվի շուրջ 1.3 մլն ԱՄՆ դոլար կամ ընկերության եկամտի միջինում շուրջ 5-8%: 27
   3.4. Կազմակերպչի կողմից իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցը 30
4. ԱՏԳ գործունեության և զարգացման արդյունքները..... 32
   4.1. ԱՏԳ գործունեության արդյունքում կանխատեսվող ներդրումները 32
   4.2. Զբոսաշրջային հոսքերի կանխատեսումը 34
   4.3. Արտահանման կանխատեսվող ծավալները և ուղղությունները.....35
   4.4. Նոր աշխատատեղերի կանխատեսվող քանակը 36
   4.5. Ծրագրի սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունը 38
5. Պետության կողմից ակնկալվող աջակցությունը 40
6. Կազմակերպչի կողմից տրամադրվող ծառայությունների ցանկը և սակագները 42

1. «Մայլեռ» ԱՏԳ ստեղծման նախաձեռնողը և կազմակերպիչ ընկերությունը

«Մայլեռ» ազատ տնտեսական գոտու (այսուհետ՝ ԱՏԳ) ստեղծման նախաձեռնողն է «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), որի ներդրումային ծրագիրը ՀՀ կառավարության 2021 թվականի 29 հուլիսի թիվ 1246-Ա որոշմամբ ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել: Համաձայն նշված որոշման՝ ընկերությունը ծրագրի իրականացման տարածքում՝ ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրում, պարտավորվել է ստեղծել ազատ տնտեսական գոտի:

ԱՏԳ ստեղծելու աշխատանքները կիրականացնի Ընկերության կողմից հիմնադրված կազմակերպությունը կամ դուստր ձեռնարկությունը, որը կհանդիսանա «Մայլեռ» ազատ տնտեսական գոտու կազմակերպիչ:

«Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ-ն ծրագրի իրականացման **ընթացքում արդեն իսկ իրականացրել է ավելի քան 15 մլն ԱՄՆ դոլարի ներդրումներ** համապատասխան ենթակառուցվածքների ձևավորման նպատակով, ինչպես նաև **ստեղծել է 90-100 նոր աշխատատեղ:**

2. «Մայլեռ» ԱՏԳ ստեղծման նախադրյալները և նպատակը

2.1. ԱՏԳ-ների ստեղծման միջազգային փորձը

Ներկայումս աշխարհի 147 երկրում գործում է ավելի քան 5500 հատուկ/ազատ տնտեսական գոտի, ևս 300-400 գոտի պլանավորվում է հիմնել: ԱՏԳ-երը լայնորեն կիրառվում են որպես ներդրումների և արտահանման խթանման, զբաղվածության ընդլայնման գործիք: Հատկապես զարգացող երկրներում լայն տարածում են ստացել արտահանման ուղղվածությամբ արտադրական գոտիները: Ընդունված է համարել, որ առավել մեծ հաջողություններ են արձանագրում ԱՄԷ, ինչպես նաև ասիական հատուկ տնտեսական գոտիները, մասնավորապես Չինաստանի, Սինգապուրի և Հնդկաստանի հատուկ տնտեսական գոտիները:

- **Չինաստան**

Չինաստանում հատուկ տնտեսական գոտիների պատմությունը սկիզբ է առնում 1979 թվականից: Չինական գոտիների հաջողության գրավականը պայմանավորված է մի շարք գործոններով: Նախ՝ Չինաստանի հատուկ տնտեսական գոտիներում ներդրվել է «բաց դռների» քաղաքականությունն օտարերկրյա ներդրումների նկատմամբ: Երբ Չինաստանը 1980 թվականին բացեց իր դռները համաշխարհային առևտրի համար, հատուկ տնտեսական կամ արտահանմանն ուղղված գոտիները դարձան առևտրի ազատականացման կարևոր գործոններից մեկը: Այդ հատուկ գոտիները յուրահատուկ փորձադաշտ էին կապիտալիզմի տարածումը երկրի մնացած մասում փորձարկելու համար: Ընկերությունների հիմնադրման, ներդրողների մուտքի արտոնագրերի և կացության, արտոնությունների սահմանման հարցերում առկա էր կենտրոնական իշխանություններից ինքնավարություն: Բացի այդ, հատուկ շրջանների տեղական ինքնակառավարման մարմիններին թույլատրվում էր օգտագործել իրենց իրավազորության ներքո գործունեություն ծավալող ընկերություններից ստացած բոլոր հարկերը (մնացած մասում ՏԻՄ-ին մնում էր հարկային մուտքերի միայն 25 տոկոսը): Հաջորդ տարիներին Չինաստանի տնտեսության ֆենոմենալ աճը հաճախ վերագրում են հատուկ տնտեսական գոտիների հաջողություններին: Օրինակ, Կրուգմանն ու Օբստֆելդը (2003)[1] բնորոշում են 1980-ականների Չինաստանի տնտեսության աճը որպես «արտահանմանը կողմնորոշված ինդուստրիալիզացիայի դասական ցուցադրություն»: Առ այսօր Չինաստանի հատուկ տնտեսական գոտիներն առաջնորդվում են շուկայական պահանջարկով, ընդգրկում են տնտեսության ոլորտների լայն շրջանակ, ունեն ընդարձակ աշխարհագրություն, ակտիվորեն համագործակցում են Չինաստանի այլ տարածքների հետ:

- **Սինգապուր**

Սինգապուրն ապրանքների և ծառայությունների արտահանմանն ուղղված հատուկ գոտիների հաջող զարգացման օրինակներից է: Այստեղ գործող մի շարք արդյունաբերական գոտիներին բաժին է ընկնում երկրի մշակող արդյունաբերության արդյունքի արտահանման գերակշիռ մասը: Պետության կողմից համապատասխան ենթակառուցվածքների ֆինանսավորումն, առևտրի ազատականացված ռեժիմը, ինչպես նաև ընկերությունների

[1] http://course.sdu.edu.cn/g2s/ewebeditor/uploadfile/20120417191243_590081573385.pdf

գրանցման, հաշվետվողականության և հարկման հարցերում լուծումները Սինգապուրի հատուկ գոտիների զարգացման հաջողության հիմնական գրավականներն են:

Սինգապուրի արտահանման և ներմուծման լիբերալ ռեժիմը թույլ է տալիս դիտարկել այն որպես միասնական արտահանման տարածք: Արտահանող արտադրության կազմակերպման համար կառավարությունը երկրի մի շարք շրջաններ հայտարարել է որպես արդյունաբերական գոտիներ, այսինքն՝ ամբողջությամբ արտահանմանը նպատակաուղղված արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծման համար ապահովված տարածքներ: Պետությունը ֆինանսավորել է արդյունաբերական ենթակառուցվածքների համակարգի ստեղծումը, ներառյալ՝ ճանապարհները, էլեկտրաէներգիայի մատակարարումը, ջրամատակարարումը, կապի և հեռահաղորդակցման համակարգը և այլն: Վերջին 2 տասնամյակում Սինգապուրի տնտեսությունում տեղի ունեցավ կառուցվածքային փոփոխություն դեպի բարձրտեխնոլոգիական ապրանքների արտադրության աճը:

Ազատ առևտրի և արդյունաբերական գոտիների ստեղծումն իրականացվում է հատուկ ծրագրի շրջանակներում, որի իրագործումը սկսվել է 1970թ., երբ Սինգապուրի խորհրդարանն ընդունեց «Տնտեսության զարգացման խթանման մասին» օրենքը:

1980-ական թթ. վերջին Սինգապուրում կազմավորվեց 25 արդյունաբերական շրջան (այդ թվում Դուրոնգում, Կրանջիում, Սունգեյ Կադուտում, Յու Տիում, Լոյանգում և այլն), որտեղ ստեղծվեց գրեթե 4 հազար ձեռնարկություն՝ 183 հազար զբաղվածներով և շուրջ 20 մլրդ սինգապուրյան դոլար ներդրումներով:

1990-ական թթ. սկզբին արդյունաբերական գոտիներին էր բաժին ընկնում Սինգապուրի վերամշակման արդյունաբերական արտադրանքի արտահանման գրեթե 80%-ը:

Անցումը գիտատար ճյուղերի զարգացման առաջնահերթությանը խթանեց արդեն բարձր տեխնոլոգիական ուղղվածության գոտիների ստեղծումը:

- **Արաբական Միացյալ Էմիրություններ**

ԱՄԷ հատուկ գոտիներն ընդհանուր առմամբ կարելի է դասակարգել նավահանգստային, օդանավակայաններին կից և մայրցամաքային հատուկ գոտիների, որտեղ գործում են մի շարք արտոնություններ և երաշխիքներ: Օրինակ՝ թույլատրված է ընկերության 100 տոկոս օտարերկրյա սեփականություն, եկամուտների ամբողջական հայրենադարձությունը, առաջարկվում է աջակցություն աշխատուժի հավաքագրման, ինչպես նաև բնակություն հաստատելու հարցերում: Բացի այդ՝ գործում են հարկային արտոնություններ անհատական հարկերից և շահութահարկից ազատման տեսքով:

- **Տարածաշրջանային ինտեգրացիա հատուկ տնտեսական գոտիների միջոցով**

Հատուկ տնտեսական գոտիներն արդյունավետ են նաև տարածաշրջանային ինտեգրացիայի նպատակների համար: Այս ուղղությունում էլ նույնպես Չինաստանը առաջատարներից է: Շուրջ երկու տասնամյակ Չինաստանն իրականացնում է արտաքին առևտրի և տնտեսական համագործակցության գոտիների զարգացումը: Օրինակ, 1999 թ. Չինաստանի կառավարությունը Եգիպտոսի հետ պայմանագիր է կնքել Սուեզի տնտեսական գոտում արդյունաբերական գոտի ստեղծելու մասին: Նույն 1999 թվականին սարքավորումների արտադրության չինական հսկան՝ «Haier» ընկերությունը կառուցել է իր առաջին արդյունաբերական համալիրը ԱՄՆ Հարավային Կարոլինայում, 2001 թ. Պակիստանի Լահոր քաղաքում կառուցվել է համատեղ արդյունաբերական պարկ: «Ֆուջի Հուաքիաո» ընկերությունը 2000 թվականին Կուբայում կառուցել է արդյունաբերական և առևտրային գոտի: 2004 թ. Չինաստանի Միջին արևելքի ներդրումների և առևտրի խթանման կենտրոնը և էմիրաթական Ջաբոլ Ալի ազատ առևտրի գոտին 300 մլն ԱՄՆ դոլար ներդրմամբ կառուցեցին առևտրի կենտրոն Դուբայում 4000 ընկերություն հյուրընկալելու համար:

Վերջին տարիներին տարածված են դառնում նաև պետություն-պետություն գործընկերային հատուկ տնտեսական գոտիները: Նման գործընկերությունները ամրագրված են երկկողմանի համաձայնագրերում, որտեղ ամրագրված են համատեղ աշխատատեղերի ստեղծման, պարտականությունների բաժանման, ինչպես նաև գոտիների զարգացման և կառավարման մեխանիզմները:

Տարածաշրջանային ինտեգրացիայի խորացումը հանգեցրել է նաև սահմանային հատուկ տնտեսական գոտիների զարգացումը: Մեծ Մեկոնգի ենթաշրջանի միջանցքների զարգացումը տարածաշրջանային տնտեսական համագործակցության ծրագիր է, որը ներառում է Կամբոջան, Չինաստանը, Լաոսը, Մյանման, Թաիլանդը և Վիետնամը, և նպաստում է այս երկրներին սահմանային գոտիներում ստեղծել հատուկ տնտեսական գոտիներ՝ միջանցքների միջև կապը բարելավվելու համար:

Միջսահմանային հատուկ տնտեսական գոտիները համեմատաբար նոր երևույթ են, և դեռ վաղ է անել եզրակացություններ նրանց արդյունավետության վերաբերյալ: Քաղաքական աջակցությունը ներգրավված բոլոր պետությունների կառավարությունների կողմից նրանց հաջողության բանալին է: Հաջողված օրինակներից է ղազախաչինական «Խորգոս» ազատ տնտեսական գոտին, որը տեղակայված է Ղազախստանի և Չինաստանի սահմանին և ներառում է ինչպես արդյունաբերական, այնպես էլ ծառայությունների մատուցման և զբոսաշրջային գործունեության ոլորտները:

- **ԵԱՏՄ երկրներ**

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ազատ (հատուկ) գոտիների գործունեությունը կարգավորվում է ԵԱՏՄ մասին պայմանագրով, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքով, «Մաքսային միության մաքսային տարածքում ազատ (հատուկ, առանձնահատուկ) տնտեսական գոտիների և «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգի հետ կապված հարցերի վերաբերյալ» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրով և ԵԱՏՄ անդամ պետությունների օրենսդրությամբ: Մասնավորապես, մաքսատուրքերի վճարման և մաքսային ընթացակարգերին առնչվող հարցերը կարգավորվում են մաքսային օրենսգրքով, իսկ գոտիների ստեղծման, լուծարման, դրանցում թույլատրված/արգելված գործունեության տեսակների կամ հատուկ իրավական կարգավորում պահանջող գոտիների գործունեությանն առնչվող հարցերը կարգավորվում են համաձայնագրով և ներքին օրենսդրությամբ: Հարկ է նշել, որ գոտիների կազմակերպման, շահագործման, տրամադրվող արտոնությունների շրջանակների, ծառայությունների

մատուցման և մի շարք այլ հարցեր ԵԱՏՄ անդամ յուրաքանչյուր պետություն կարգավորում է իր ազգային օրենսդրությամբ:

- **Զբոսաշրջային-ռեկրեացիոն հատուկ տնտեսական գոտիներ**

Ինչ վերաբերում է ծառայությունների մատուցման (ռեկրեացիոն/զբոսաշրջային) ազատ տնտեսական գոտիներին, **ապա վերջիններս ստեղծվում են մեկ կամ մի քանի տարածքներում զբոսաշրջության ոլորտում ծառայությունների մատուցման և զարգացման նպատակով:** Այս հատուկ տնտեսական գոտիներում սովորաբար չեն կիրառվում մաքսային արտոնություններ (մեծ ապրանքային հոսքերի բացակայության պատճառով), հետևաբար, չի կիրառվում «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը և առկա չեն մաքսային հսկողության համար անհրաժեշտ ենթակառուցվածքները:

Զբոսաշրջային-ռեկրեացիոն հատուկ տնտեսական գոտիներում իրականացվում է զբոսաշրջային և ռեկրեացիոն գործունեություն, մասնավորապես՝ զբոսաշրջային արդյունաբերության օբյեկտների շինարարության, վերակառուցման, շահագործման, առողջարանային բուժման, բժշկական վերականգնման և քաղաքացիների հանգստի համար նախատեսված միջոցառումներ, ինչպես նաև զբոսաշրջային գործունեություն, հանքային ջրերի և այլ բնական բուժիչ ռեսուրսների զարգացում, այդ թվում՝ առողջարանային բուժման և հիվանդությունների կանխարգելման, բժշկական վերականգնման, քաղաքացիների հանգստի կազմակերպման, հանքային ջրերի արդյունաբերական շշալցման աշխատանքներ:

Զբոսաշրջային-ռեկրեացիոն հատուկ տնտեսական գոտիները տեղակայված են լինում առավել գեղատեսիլ և զբոսաշրջային պահանջարկ ունեցող շրջաններում և բարենպաստ պայմաններ են առաջարկում զբոսաշրջության, սպորտի, հանգստի և այլ տեսակի բիզնեսի կազմակերպման համար: Հաջողված զբոսաշրջային-ռեկրեացիոն հատուկ տնտեսական գոտիներ գործում են Ֆիլիպիններում, Ինդոնեզիայում, Հնդկաստանում, Չինաստանում, ՌԴ-ում, Մալայզիայում և այլն:

2.2. Լեռնադահուկային զբոսաշրջության ներկա իրավիճակը

- **Համաշխարհային միտումները**

Ներկայումս աշխարհում գործում է ավելի քան 6000 լեռնադահուկային հանգստավայր:

Աշխարհի շուրջ 70 երկիր առաջարկում է համապատասխան ենթակառուցվածքներով հագեցված բացօթյա լեռնադահուկային գոտիներ՝ ծածկված ձյունով: 2021 թվականին ամբողջ աշխարհում դահուկորդների տարեկան այցելությունների ընդհանուր թիվը կազմել է մոտ 420 միլիոն (մարդ-օր): Այս թվի մոտավորապես կեսը բաժին է ընկնում է Եվրոպային: Ալպերի տարածաշրջանը հյուրընկալում է աշխարհի լեռնադահուկային հանգստավայրերի մեծ մասը՝ ավելի քան մեկ երրորդը: Համաձայն վերջին տվյալների[2]՝ **լեռնադահուկային հանգստավայրերի շուկան գնահատվում է շուրջ 15 մլրդ ԱՄՆ դոլար** և ըստ կանխատեսումների մինչև 2032թ. կհասնի շուրջ 28 մլրդ ԱՄՆ դոլարի՝ ապահովելով միջինում 9% տարեկան աճ:

Իսկ դահուկներով սահելու գլոբալ շուկայի ծավալը 2022թ. հասնում էր ավելի քան 1.65 մլրդ ԱՄՆ դոլարի: Կանխատեսվում է, որ 2023-ից 2028թթ. ընկած ժամանակահատվածում ոլորտը կաճի միջինում 3.2% տարեկան և 2028թ. կհասնի շուրջ 1.99 մլրդ ԱՄՆ դոլարի[3]: Համաձայն Ֆորբսի[4] կողմից հաշվարկված Forbes Advisor World Ski Index-ի[5]՝ աշխարհի լավագույն լեռնադահուկային հանգստավայրերն է Les Trois Vallées-ը հանգստավայրը, որը կապված է մեծ ֆրանսիական Ալպերի լեռնադահուկային գոտու հետ: Ընդհանուր առմամբ, եվրոպական ուղղությունները՝ ֆրանսիական, շվեյցարական և ավստրիական հանգստավայրերը լավագույն արդյունքն են ունեցել և զբաղեցրել են վարկանիշի տասը լավագույններից ինը դիրք: Իններորդ տեղում հանգրվանած՝ Հյուսիսային Ամերիկայի Կոլորադոյի Վեյլ լեռնադահուկային հանգստավայրը Եվրոպայից դուրս միակ ուղղությունն է, որը ներառվել է լավագույն տասնյակում:

- **Տարածաշրջանային միտումները**

[2] https://www.futuremarketinsights.com/reports/mountain-and-ski-resorts-sector-overview

[3] https://www.expertmarketresearch.com/reports/ski-market

[4] https://www.forbes.com/uk/advisor/travel-insurance/worlds-best-ski-resorts/

[5] Վարկանիշի շրջանակում վերլուծել են հանգստավայրերի որակը, արժեքը և հասանելիությունը: Հանգստավայրերը գնահատվել են 14 տարբեր գործոնների հիման վրա՝ ներառյալ լանջերի երկարությունը և բազմազանությունը, դահուկորդների և սնոուբորդիստների կարծիքները, տեսարանի որակը և փող արժեքի դիմաց ցուցանիշը: Ըստ վարկանիշի հանգստավայրերը գնահատվել են 0-ից 100 միավորով:

Չնայած ԱՊՀ երկրների մեծ մասը գտնվում է լեռնային շրջաններում, լեռնադահուկային ոլորտը տարածաշրջանում թերզարգացած է: Կանխատեսումները ցույց են տալիս, որ բնակչության շրջանում աճում է դահուկային սպորտի նկատմամբ հետաքրքրությունը, և ԱՊՀ երկրներում լեռնադահուկային ոլորտում առկա են աճի միտումներ:

Վրաստանի լեռնադահուկային ոլորտը տնտեսության արագ աճող հատվածներից մեկն է, որը վերջին 5 տարում աճել է շուրջ 25% CAGR-ով: Միջազգային հանրահայտ ցանցային հյուրանոցներ են բացվել հիմնական լեռնադահուկային հանգստավայրերում՝ Գուդաուրիում և Բակուրիանիում:

Գուդաուրին երիտասարդ և արագ զարգացող ձմեռային սպորտի հանգստավայր է, որը գտնվում է Վրաստանի Կազբեգի շրջանում, Թբիլիսիից 120 կմ հեռավորության վրա, 2196 մ բարձրության վրա (մոտ 7200 ֆուտ) Խաչի լեռնանցքի մոտ: Դահուկների սեզոնը տևում է դեկտեմբերից ապրիլ, առկա են հարմարավետ դահուկներ բոլոր երթուղիներում: Մայիսին դահուկավազքը հնարավոր է հինգերորդ (ամենաբարձր) կամ ձյունառատ տարիներին նույնիսկ երկրորդ ճոպանուղու վրա:

Գուդաուրիի և Բակուրիանիի լանջերը միասին ունեն 11 լեռնադահուկային ճոպանուղի, 28 լեռնադահուկային արահետ և 44 կմ լեռնադահուկային երթուղի: Մյուս լեռնադահուկային հանգստավայրերն են Թեթնուլդի-Մեստիան, Գոդերձին, Հացվալի-Մեստիան, Բետանիան:

Անշարժ գույքի զարգացման ընկերությունը (RED-CO) Գուդաուրիում 150 միլիոն դոլարի ներդրման գործընթացում է: Ընկերությունն ունի չորս փուլանոց նախագիծ՝ համաձայն Գուդաուրի հանգստավայրի զարգացման 2015 թվականի գլխավոր պլանի, որը ստեղծվել է Ecosign Mountain Planners-ի (գլոբալ առաջատար կանադական մասնագիտացված ընկերություն) կողմից: RED-CO-ն իր ծրագրերն իրականացնելու համար ձեռք է բերել 50 հեկտար հողատարածք:

Ռուսական լեռնադահուկային ոլորտը ամենաարագ զարգացողներից մեկն է, հատկապես Սոչիի ձմեռային օլիմպիական խաղերից հետո: «Կրասնայա Պոլյանան» և «Ռոզա Խուտորը» (Սոչի), «Շերեգեշը» (Կեմերովո) և «Բոլշոյ Վուդյավրը» (Մուրմանսկ) Ռուսաստանի առաջատար և ամենամեծ լեռնադահուկային հանգստավայրերն են:

Այս համալիրներում սնոուբորդն ու դահուկները միակ զվարճանքը չեն, յուրաքանչյուր հանգստավայր առաջարկում է իր լրացուցիչ ծառայությունները: Ամենից հաճախ դա

ռուսական բաղնիք կամ սաունա է, փակ լողավազաններ և մարզասրահներ, մանկական սենյակներ և ակումբներ, սառցադաշտեր, ինչպես նաև հյուսիսային եղջերուների կամ խասկիների սահնակներ:

ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ լարվածության աճի պայմաններում ռուսաստանցի դահուկորդների ընտրությունը սահմանափակ է:

- **Իրավիճակը Հայաստանում**

2010-ից 2020 թթ. Հայաստանում զբոսաշրջության տարեկան աճը կազմել է միջինում 15 տոկոս, ինչը դարձրել է Հայաստանը աշխարհի ամենաարագ զարգացող զբոսաշրջային ուղղություններից մեկը: Ակնկալվում է, որ միջինում 8% տարեկան աճի պայմաններում 2030 թվականին միջազգային զբոսաշրջիկների ընդհանուր թիվը կհասնի 2.8 մլն այցելուի:

Աղյուսակ 1. ՀՀ միջազգային զբոսաշրջության ծավալները (կանխատեսվող), 2023-2030թթ., հազ. մարդ

2023	**2024**	**2025**	**2026**	**2027**	**2028**	**2029**	**2030**	
1575	1654	1736	1823	1914	2010	2111	2216	5% աճ
1620	1750	1890	2041	2204	2380	2571	2776	8% աճ
1695	1915	2164	2446	2764	3123	3529	3988	13% աճ

Աղբյուր՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Համաձայն ՀՀ զբոսաշրջության զարգացման ռազմավարության՝ մինչև 2030 թվականը միջազգային զբոսաշրջիկների այցելությունների թիվը գնահատվում է մինչև 3 միլիոն:

Նախատեսվում է նաև, որ զբոսաշրջության ոլորտից եկամուտները տարեկան կտրվածքով կավելանան միջինը 7%-ով, ինչը 2030 թվականին կկազմի շուրջ 2.5 միլիարդ ԱՄՆ դոլար:

Հայաստանը որպես լեռնային զբոսաշրջության ուղղություն տարածաշրջանում գտնվում է ամենաթույլ դիրքերում. առաջատարն է Վրաստանը:

Հայաստանն ունի 3 լեռնադահուկային հանգստավայր, որոնցից ամենամեծը Ծաղկաձորն է՝ մոտ 12.7 կմ լեռնադահուկային սահուղիներով: Շուրջ 300 հազար զբոսաշրջիկ է տարեկան այցելում Ծաղկաձոր, որից մոտ 90 հազարը՝ ձմեռային սեզոնին:

Համեմատության համար հարկ է նշել, որ Վրաստանի միայն Գուդաուրի լեռնադահուկային համալիրի այցելուների թիվը միայն ձմեռային շրջանում անցնում է 650 հազարը, իսկ նմանատիպ հանգստյան գոտիները Վրաստանում հինգն են, որոնց հիմնական այցելուները ՌԴ-ից և ԵՄ-ից են:

Այսօր Ծաղկաձորում գործող հանգստյան տների և հյուրանոցների տարողունակությունը կազմում է շուրջ 3200 մահճակալ/օր: Միջազգային զբոսաշրջիկների մեծ մասը ՌԴ քաղաքացիներն են, երկրորդ տեղում են ԻԻՀ-ից ժամանող այցելուները: Հարկ է նշել, որ այս առումով Հայաստանը գտնվում է շահեկան դիրքում, քանի որ ռուս զբոսաշրջիկները կարող են ժամանել ՀՀ ներքին անձնագրերով:

Ինչ վերաբերում է գնային քաղաքականությանը, հարկ է նշել, որ Ծաղկաձորում ճոպանուղու օրական տոմսն արժե 12,000 ՀՀ դրամ (շուրջ 30 ԱՄՆ դոլար), իսկ Վրաստանում 40 լարի (շուրջ 15 ԱՄՆ դոլար): Այսպիսով, Վրաստանն այցելուների քանակով անհամեմատ շահեկան դիրքում է, սակայն տուժում է ռուսական շուկայի ներուժը թերի օգտագործվելու առումով:

Լեռնային համալիրների զարգացման պատմության մեջ շատ քիչ են այնպիսի հանգստավայրեր, որոնք նախագծվել և կառուցվել են հենց այդ նպատակով. որպես կանոն դրանք կառուցվել են արդեն գոյություն ունեցող բնակավայրերի հիման վրա և ունեն զարգացման ուրույն կառուցակարգ:

Լեռնադահուկային համալիրների հիմնական ընդհանուր գիծն այն է, որ ճոպանուղիների ճնշող մեծամասնությունը հանդիսանում է պետական կամ համայնքային սեփականություն, իսկ հյուրանոցները, հանգստյան և ժամանցի կենտրոնները՝ մասնավոր սեփականություն (Վրաստանի օրինակով): Հայաստանի միջազգային վարկանիշի պարբերական բարձրացումը նպաստում է ցանկացած զբոսաշրջային ծրագրի ներուժի բացահայտմանը և արդյունքում երկրի տնտեսական զարգացմանը: Այս համատեքստում հատկանշական է պետության դերը ենթակառուցվածքների ձևավորման և զարգացման հարցում:

2.3. ԱՏԳ ստեղծման նպատակը և անհրաժեշտությունը, գործունեության ժամկետները

- **ԱՏԳ ստեղծման նպատակը**

«Մայլեռ» ԱՏԳ ստեղծման ծրագիրը **միտված է ՀՀ-ում զբոսաշրջության բազմազանության ու զարգացման ապահովմանը, ինչպես նաև առողջ ապրելակերպի հաստատմանը և համահունչ է ՀՀ կառավարության կողմից որդեգրած տնտեսական զարգացման ռազմավարությանը:**

Կազմակերպիչը պատրաստվում է իրականացնել խոշորածավալ ներդրումներ ԱՏԳ տարածքում համապատասխան ենթակառուցվածքների, առաջին հերթին ճոպանուղու և սահուղիների ձևավորման ուղղությամբ, ինչը կդառնա իր շուրջ զբոսաշրջային նոր քաղաքի ստեղծման առաջին և ամենակարևոր գրավականը:

Ծրագրի նպատակն է կառուցել տարածաշրջանի մակարդակով **եվրոպական ստանդարտներին համապատասխան լեռնադահուկային հանգստավայր**, ինչը կնպաստի երկրի զբոսաշրջային գրավչության բարձրացմանը և երկրի/մարզի սոցիալ-տնտեսական կայուն զարգացմանը:

Հայաստանի միջազգային վարկանիշի պարբերական բարձրացումը նպաստում է ցանկացած զբոսաշրջային ծրագրի ներուժի բացահայտմանը և արդյունքում երկրի տնտեսական զարգացմանը:

Սույն նախաձեռնությունն աննախադեպ է, քանի որ մասնավոր կազմակերպությունն իր վրա է վերցնում ենթակառուցվածքային այնպիսի ներդրումներ, ինչպիսիք են՝ ճոպանուղու, սահուղիների կառուցում, արհեստական ձնագոյացման համակարգի ձեռքբերում և տեղադրում, որոնք առհասարակ իրականացվում են պետության կամ համայնքի կողմից՝ փոխարենը ակնկալելով պետական աջակցություն կոնկրետ ուղղություններով:

Ծրագրի շրջանակներում նախատեսված ենթակառուցվածքներն իրենց շուրջ են կենտրոնացնելու հյուրանոցային և ժամանցային ոլորտներում այլ ներդրողների, որոնք ներդրումներ կատարելով՝ նպաստելու են ոլորտի շարունակական զարգացմանը՝ ապահովելով լրացուցիչ աշխատատեղեր տվյալ համայնքի բնակիչների և ՀՀ այլ քաղաքացիների համար:

Այդպիսի ենթակառուցվածքներից ամենակարևորը ճոպանուղին է, որը բազմիցս ապացուցել է իր «սոցիալական մագնիսի» ազդեցությունը երկրի, այդ թվում՝ տվյալ մարզի տնտեսության վրա:

Ծրագրի իրականացումը բացառիկ է նրանով, որ նմանօրինակ ենթակառուցվածքային ներդրումներ մասնավոր հատվածի կողմից Հայաստանում երբևէ չեն իրականացվել, և նման համագործակցության հաջողված օրինակը կարող է հզոր խթան հանդիսանալ պետություն-մասնավոր համագործակցության հետագա զարգացման համար:

- **ԱՏԳ ստեղծման անհրաժեշտությունը**

ԱՏԳ ստեղծման անհրաժեշտությունն առաջին հերթին պայմանավորված է ՀՀ կառավարության 2021 թվականի 29 հուլիսի թիվ 1246-Ա որոշման դրույթներով, որոնց համաձայն «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ-ն պարտավորվել է ստեղծել համանուն լեռնադահուկային հանգստավայրի տարածքում ազատ տնտեսական գոտի:

Հարկ է նշել, որ հանգստավայրի **հսկայական տարածքը ամբողջությամբ կառուցապատելու և զարգացնելու համար անհրաժեշտ են հսկայածավալ ներդրումներ**, ինչը «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ՓԲԸ միայնակ չի կարող իրականացնել: Նոր ներդրումներ ներգրավելու համար անհրաժեշտ է ԱՏԳ կարգավիճակը և դրանից բխող արտոնությունները, որոնք առավել գրավիչ կդարձնեն հանգստավայրը օտարերկրյա ներդրողների համար:

Միաժամանակ, **ՀՀ կառավարության կողմից բազմիցս արձանագրվել է, որ զբոսաշրջությունը հանդիսանում է պետության համար առաջնահերթ ուղղություններից մեկը և համարվում է ծառայությունների արտահանման ձև:** Բացի այդ, զբոսաշրջության զարգացման ուղղությամբ պետության կողմից իրականացված ծախսերի հետգնումն առավել արդյունավետ է, իսկ Ծրագիրը առանձնահատուկ է նրանով, որ չի ակնկալում պետության կողմից հավելյալ զգալի ծախսեր:

Կազմակերպիչը, քաջ գիտակցելով ներկա տնտեսական իրավիճակը և հաշվի առնելով ՀՀ պետական բյուջեի միջոցների սահմանափակությունը, նախատեսում է սկսել իր գործունեությունն առանց պետական ֆինանսական միջոցների ներգրավման, ինչը իր

հերթին հանդիսանում է ազատ տնտեսական գոտու ստեղծման անհրաժեշտության և նպատակահարմարության ապացույց՝ պայմանավորված ԱՏԳ տեղակայման տարածքում ենթակառուցվածքներ ստեղծելու համար Կազմակերպչի կողմից նախատեսվող խոշորածավալ ներդրումները:

- **ԱՏԳ գործունեության և գործարկման ժամկետները**

Հաշվի առնելով ծրագրի մի քանի փուլով իրականացման ժամկետները, իրականացվելիք ներդրումների երկարաժամկետ հետգնումը, ինչպես նաև **երկարաժամկետ ներդրումներ ներգրավելու համար կայուն պայմանները և ներդրողների վստահությունը** ամրապնդելու խնդիրը, առաջարկում ենք **ԱՏԳ գործունության ժամկետը սահմանել 20 տարի**:

Ինչ վերաբերում է **ԱՏԳ գործարկման ժամկետին**, ապա, հաշվի առնելով, որ առաջին փուլի հիմնական անհրաժեշտ ենթակառուցվածքներն արդեն իսկ պատրաստ են, միաժամանակ, առաջին փուլերում տարածքում ազատ մաքսային գոտի մաքսային ընթացակարգի չկիրառվելու պատճառով կարիք չկա մաքսային հսկողության հատուկ ենթակառուցվածքներ ստեղծելու, առաջարկում ենք այն **սահմանել անմիջականորեն ԱՏԳ ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշման ուժի մեջ մտնելու ժամկետը**:

2.4. ԱՏԳ տեղակայման հիմնավորվածությունը

Տարածքի ընտրությունը պայմանավորված է մի քանի գործոնով: Նախ **տարածքի բնակլիմայական պայմաններով**, որոնք բարենպաստ են լեռնադահուկային հանգստավայրի և ընդհանուր առմամբ զբոսաշրջային ծառայություններ մատուցելու համար: «Մայլեռ» լեռնադահուկային հանգստավայրը գտնվում է Արագածոտնի մարզում՝ Արագած լեռան արևելյան լանջերին: Տեղանքի բարձրությունը ծովի մակերևույթից 2000 մետր է: Կլիման բարեխառն ցուրտ լեռնային է: Ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով, ինչը բարենպաստ է ձմեռային, մասնավորապես լեռնադահուկային հանգստավայրի զարգացման համար: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 450-600 մմ: Տեղանքը առանձնանում է նաև

ձմեռային երկար սեզոնով և խորը ձյունով: Եղիպատրուշի տարածաշրջանում ձյան օրերը կանխատեսվում են միջինը 15 օր:

Լանջերը հարմար են ավանդական դահուկավազքի և սնոուբորդի համար և համապատասխան բարձրությունը հելի-դահուկային և էքստրեմալ լեռնադահուկային սպորտի համար: Լեռան գագաթին առկա է կասկադային ճոպանուղիներ կառուցելու հնարավորություն:

Մյուս կողմից տարածքը, որտեղ գտնվելու է ԱՏԳ-ն, **ներկայումս չի օգտագործվում, որևէ հավելյալ արժեք չունի և չի կարող որևէ հարկման բազա ապահովել**, այդ թվում՝ նաև այն պատճառով, որ այստեղ **բացակայում են անհրաժեշտ ենթակառուցվածքները և կոմունիկացիաները՝ ջրամատակարարում, էլեկտրաէներգիա, գազամատակարարում, ճանապարհներ, ջրահեռացում** և այլն: Հետևաբար, ԱՏԳ գործարկմամբ և խոշորածավալ ներդրումների ներգրավմամբ որոշ ժամանակ անց կստեղծվի ծաղկուն հանգստավայր, հավելյալ արժեք տնտեսությունում, կայացած եկամտաբեր ոլորտ, զբաղված գյուղացիներ և այլն: Զբոսաշրջության զարգացման տեսակետից տեղանքը բարենպաստ է նաև իր հասանելիության աստիճանով: Այն գտնվում է երկրի հիմնական տրանսպորտային կոմունիկացիաների համեմատաբար հարևանությամբ:

Հասանելիություն (մեքենայով).

Մայրաքաղաք Երևան՝ 1.2 ժամ,

Զվարթնոց միջազգային օդանավակայան՝ 1.2 ժամ,

Հայ-վրացական սահման (Բավրա)՝ 2.5 ժամ,

Հայաստանի մեծությամբ 2-րդ քաղաքը՝ Գյումրին՝ 1.5 ժամ:

Գծապատկեր 1. ԱՏԳ տարածքի բնակլիմայական պայմանները



2.5. ԱՏԳ տարածքի սահմանագիծը և նկարագիրը

«Մայլեռ» ԱՏԳ-ն գտնվում է Եղիպատրուշ համայնքի հարևանությամբ: Եղիպատրուշը գյուղ է Հայաստանի Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից՝ 27 կմ հյուսիս-արևելքում: Գյուղը գտնվում է Ապարանից մոտ 15 կմ հարավ, Ապարանի ջրամբարի հարավարևելյան մասում, Երևան-Ապարան խճուղուց դեպի աջ մոտ 10 կմ: Խմելու ջուրը սառնորակ է, բերված մոտակա լեռան լանջից՝ 5 կմ հեռավորությունից: Տարածքը գտնվում է ծովի մակարդակից 2000 մետր բարձրության վրա: Կլիման բարեխառն ցուրտ լեռնային է, իսկ ձմեռները տևական են, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 16-18-ի սահմաններում, հունվարյանը՝ -6,-8-ի սահմաններում: Բնական լանդշաֆտները սևահողային տափաստաններ են:

Բուն ԱՏԳ ընդհանուր տարածքը կազմում է շուրջ 2080 հա, որի մի մասը լինելու է ընկերության սեփականությունը, իսկ մնացածը վերցվելու է վարձակալության հիմունքով:

Գծապատկեր 2. ԱՏԳ սահմանագիծը



Հանրության գերակա շահ ճանաչված տարածք, ԱՏԳ հատված

Վարձակալական տարածք, ԱՏԳ հատված

ԱՏԳ տարածքից դուրս գտնվող հատված

ԱՏԳ տարածքում **կազմակերպչի և ապագա շահագործողների կողմից կկառուցվեն միջազգային ստանդարտներին համապատասխան ճոպանուղիներ, ավելի քան 100 կմ երկարությամբ սահուղիներ** (1950-ից 2850 մ բարձրության վրա), **հյուրանոցային և ժամանցային համալիրներ**, ինչպես նաև կտեղադրվի արհեստական ձնագոյացման համակարգ, կստեղծվեն ձմեռային և ամառային հանգստի այլ ենթակառուցվածքներ:

Նախատեսվում է, որ հյուրանոցները կլինեն երեք տեսակի՝ ըստ չափերի. 180 և ավելի սենյակներով, 120-130 սենյակներով և 20-30 սենյականոց:

Ծրագրի շրջանակներում միայն կազմակերպչի ընդհանուր ներդրումների ծավալը կկազմի մինչև 30 մլրդ դրամ սահուղիների և արհեստական ձնագոյացման համակարգի ձեռքբերման և ժամանցային կենտրոնների (տոբոգան, տյուբինգ, «կախարդական կարպետ», զիփլայն, ջրային ատրակցիոններ) և այլ ենթակառուցվածքների կառուցման համար:

Ճոպանուղիները լինելու են եվրոպական ամենաարդիական տեխնոլոգիաներով հագեցած՝ փակ հոնդոլային տիպի, արագընթաց, ինչպիսիք տեղադրված են աշխարհահռչակ լեռնադահուկային կենտրոններում (Իշգլ, Սանտ Անտոն, Ինսբրուկ և այլն):

Կկառուցվեն նաև ձմեռային հանգստի այլ ենթակառուցվածքներ, սպա կենտրոն (շուրջ 5000մ²), ռեստորաններ և հանրային սննդի այլ կետեր, ամառային ժամանցի ենթակառուցվածքներ (զիփլայն, փեյնթբոլ, լեռնագնացություն, ձիարշավ և այլն), հյուրանոցներ, ինչպես նաև խաղատուն:

Գծապատկեր 3. ԱՏԳ-ում տեղակայվելիք օբյեկտները



Բացի այդ, տարածքում կլինեն օժանդակ այլ ենթակառուցվածքներ՝ կոմունալ ենթակառուցվածք, ավտոկայանատեղիներ, պահեստային տարածք, օֆիսային տարածքներ և այլն:

Գծապատկեր 4. ԱՏԳ ենթակառուցվածքը



2.6. ԱՏԳ ներկայացվող պահանջները և «Մայլեռ» ԱՏԳ-ն

Համաձայն «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ի ԱՏԳ-ում ներկայացվում են մի շարք պայմաններ, որոնցից մի քանիսը, համաձայն ազատ տնտեսական գոտու ստեղծման մասին ՀՀ կառավարության որոշման, պարտադիր են կատարման կազմակերպչի կողմից: Մի քանի կետերի կատարումը պարտադիր է ազատ տնտեսական գոտու այն տարածքում, որտեղ կիրառվում է «ազատ մաքսային գոտի» մաքսային ընթացակարգը:

Հաշվի առնելով, որ «Մայլեռ» ԱՏԳ-ն ծառայությունների մատուցման, մասնավորապես զբոսաշրջային-ռեկրեացիոն գործառնական տեսակի է, ինչը չի ենթադրում ապրանքների արտադրություն և զգալի ծավալների ապրանքաշրջանառություն, թե՛ տնտեսական, թե՛ կազմակերպչական նպատակահարմարության տեսակետից հիմնավորված չէ ԱՏԳ տարածքում ազատ մաքսային գոտի մաքսային ընթացակարգի կիրառությունը (առնվազն ԱՏԳ զարգացման առաջին փուլերի ընթացքում)՝ դրանից բխող տեխնիկական պահանջների կատարման հետ մեկտեղ: Ուստի ԱՏԳ կազմակերպիչը պատրաստ է «Ազատ տնտեսական գոտիների մասին» ՀՀ օրենքի հոդված 6-ի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի համաձայն ապահովել ԱՏԳ տարածքի անվտանգության, առաջնային բուժօգնության և հակահրդեհային համակարգերով ապահովվածությունը և անխափան ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման, աղբահանության և կապի միջոցների (առնվազն հեռախոսային կապի և ինտերնետի) ապահովվածությունը:

Հարկ է նշել, որ բացի վերոնշյալ պարտադիր պահանջներից ԱՏԳ կազմակերպիչը ԱՏԳ շահագործողների և այցելուների համար կստեղծի բազմաթիվ այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որոնց մասին տեղեկատվությունը արտացոլված է ներդրումային ծրագրի հաջորդ մասերում:

2.7. ԱՏԳ գործառնական տեսակը և շահագործողների կողմից իրականացվելիք գործունեության տեսակները

Հաշվի առնելով ԱՏԳ գործունեության առանձնահատկությունները և տեխնիկական պահանջները՝ առաջարկվում է որպես **ԱՏԳ գործառնական տեսակ սահմանել ծառայությունների մատուցման, այդ թվում՝ զբոսաշրջային ռեկրեացիոն**, իսկ շահագործողների թույլատրված գործունեության տեսակները ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի՝ ներքոնշյալ ցանկի համապատասխան:

Աղյուսակ 2. ԱՏԳ շահագործողների գործունեության տեսակների ցանկ

H 49.31.8	Ճոպանուղիներով ուղևորափոխադրումներ
I 55	Կացության կազմակերպում
I 56	Հանրային սննդի կազմակերպում

N 77.11	Մարդատար ավտոմոբիլների և թեթևաքաշ փոխադրամիջոցների վարձույթ*
N 77.21	Զվարճանքի և սպորտի պարագաների վարձույթ*
N 79	Զբոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ
N 82.3	Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում
R 93	Սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման բնագավառում գործունեություն

3. Կազմակերպչի կողմից իրականացվելիք ներդրումները, ստեղծվելիք աշխատատեղերը և մարքեթինգային քաղաքականությունը

«Մայլեռ» ԱՏԳ ստեղծումը և զարգացումը նախատեսվում է իրականացնել մի քանի փուլով: Առաջին **փուլը (ազատ տնտեսական գոտու ստեղծման որոշումը հաստատվելուց հետո առաջին 5 տարին)** հիմնականում ուղղված կլինի ԱՏԳ ենթակառուցվածքների ձևավորմանը, ԱՏԳ առաջմղման մարքեթինգային միջոցառումների իրականացմանը, ներդրողների հետ (այդ թվում օտարերկրյա) գործարար կապերի հաստատմանը և առաջին շահագործողների ներգրավմանը:

Երկրորդ և երրորդ (7-8-ական տարի) փուլերը միտված կլինեն հիմնականում նոր շահագործողների ներգրավմանը, այդ թվում ոլորտի առաջատարների, ինչպես նաև ճոպանուղիների ընդլայնմանը և հանգստի ենթակառուցվածքի զարգացմանը: Առաջին երեք փուլերի ժամանակահատվածը (20 տարի) պայմանավորված է զբոսաշրջային հոսքերի կանխատեսումներով (տես՝ ենթակետ 4.2):

Հաջորդ փուլերում (մինչև ԱՏԳ գործունեության ժամկետի ավարտը) ակնկալվում է ԱՏԳ համապատասխան ենթակառուցվածքներով և շահագործողներով ամբողջությամբ հագեցվածության պայմաններում կայուն զարգացման ժամանակահատվածը: Հաշվի առնելով ժամանակի երկար հորիզոնը՝ այս փուլերի համար տնտեսական ցուցանիշների

* Սույն գործունեության տեսակների մեջ ներառված լիզինգի գործունեությունը ԱՏԳ-ում նպատակահարմար չէ իրականացնել

կանխատեսումը համարում ենք ոչ նպատակահարմար՝ այդ ցուցանիշների ցածր արժանահավատության պատճառով:

3.1. Ներդրումների չափը, ձևերն, ուղղվածությունը և ժամկետները

Կազմակերպչի հիմնական կապիտալ ներդրումներն իրականացվելու են ճոպանուղու, սահուղիների, արհեստական ձնագոյացման համակարգի, սահադաշտի, հյուրանոցների, ռեստորանի, ժամանցային այլ կենտրոնների (տոբոգան, տյուբինգ, «կախարդական կարպետ», «Snow Goomer», զիփլայն, ջրային ատրակցիոններ և այլն), ինչպես նաև ԱՏԳ ներքին կոմունիկացիաների և ենթակառուցվածքների կառուցման համար:

Կազմակերպչի այլ էական ծախսերից են մարքեթինգային ծախսերը, լեռնադահուկային և ժամանցային ենթակառուցվածքների պահպանման ծախսերը, աշխատավարձի ֆոնդը և այլն:

Այսպիսով, կազմակերպիչը առաջին փուլի ընթացքում կկատարի **շուրջ 66 մլն ԱՄՆ դոլարի կապիտալ ներդրումներ:**

Աղյուսակ 3. Կազմակերպչի կողմից իրականացվելիք առաջին փուլի ներդրումները և այլ ծախսերը, ԱՄՆ դոլար

Ներդրումներ	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի	Ընդամենը
ԱՏԳ հողատարածքի ձեռքբերում	**1,300,000**	-	-	-	-	**1,300,000**
ԱՏԳ անհրաժեշտ ենթակառուցվածքի ստեղծումը և բարելավումը, այդ թվում՝	**23,480,000**	**15,980,000**	**6,840,000**	**4,028,000**	**746,000**	**51,074,000**
Ճոպանուղու ձեռքբերում, տեղադրում, մոնտաժ	12,000,000	6,000,000	2,000,000	3,500,000	500,000	24,000,000
Լեռնային ճանապարհների ստեղծում, սահուղիների կառուցում, քարամաքրման աշխատանքներ, ճմապատում և այլն	1,000,000	1,000,000	1,000,000	-	-	3,000,000

Ավտոկայանատեղի	1,000,000	-	-	-	-	1,000,000
Ձմեռային և լեռնադահուկային ժամանցի սարքավորումներ	-	1,000,000	2,000,000	-	-	3,000,000
Մանկական սահադաշտի կառուցում, մանկական զբաղմունքի կենտրոն, բաց լողավազան	-	2,000,000	1,000,000	-	-	3,000,000
Հակալավինային համակարգ (ըստ պահանջի)	2,000,000	-	-	-	-	2,000,000
Արհեստական ձնագոյացման սարքավորումներ	4,000,000	4,000,000	-	-	-	8,000,000
Վարձակալության սրահներ (բազմապիսի գույքի համար)	-	500,000	-	-	-	500,000
ԱՏԳ կոմունիկացիաների, ներքին ենթակառուցվածքների կառուցում	3,000,000	1,000,000	500,000	300,000	200,000	5,000,000
Բարեկարգում և կանաչապատում	300,000	300,000	160,000	78,000	46,000	884,000
Անվտանգության համակարգեր	180,000	180,000	180,000	150,000	-	690,000
2 Հյուրանոցի կառուցում (120 սենյակ յուրաքանչյուրը)	**1,000,000**	**3,000,000**	**2,000,000**	-	-	**6,000,000**
Հյուրանոց, որում առկա է խաղատուն (150 սենյակ)	**2,000,000**	**2,000,000**	**2,000,000**	**1,000,000**	-	**7,000,000**
Ռեստորանի կառուցում	**1,000,000**	-	-	-	-	**1,000,000**
ԸՆԴԱՄԵՆԸ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ	**35,780,000**	**17,980,000**	**8,840,000**	**4,028,000**	**746,000**	**66,374,000**
Մարքեթինգային ծախսեր	169,000	361,000	223,000	280,000	305,000	**1,338,000**

Աշխատավարձ	702,000	4,563,000	6,961,500	7,722,000	8,599,500	**28,548,000**
Այլ գործառնական և ընթացիկ ծախսեր	180,000	300,000	550,000	700,000	800,000	**2,530,000**
Չնախատեսված ծախսեր	300,000	300,000	300,000	200,000	100,000	**1,200,000**

Հարկ է նշել նաև, որ ծրագրի իրականացման հետագա փուլերում նախատեսվում է ընդլայնել համալիրը՝ ներառելով այլ ծառայություններ ևս, ուստի վերը նշված ցուցանիշները մի քանի անգամ կաճեն:

3.2. Կազմակերպչի կողմից ստեղծվող աշխատատեղերը

Ծրագրի համաձայն կազմակերպիչը, բացի հիմնական ենթակառուցվածքներից, կառուցելու է նաև ճոպանուղիներ, երեք հյուրանոց, ռեստորան, սահադաշտ, մանկական զբաղմունքի կենտրոն, սպա կենտրոն, որտեղ լինելու են բազմաթիվ հիմնական աշխատողներ: ԱՏԳ կազմակերպիչը կունենա նաև վարչական աշխատողներ, ինչպես նաև շինարարության ընթացքում կստեղծվի շուրջ 250 ժամանակավոր աշխատատեղ:

Այսպիսով, առաջին փուլում ճոպանուղիների շահագործման համար կներգրավվի շուրջ 700 աշխատակից, 3 հյուրանոցներում՝ շուրջ 510 աշխատակից (հաշվարկման մեթոդը տես՝ ծրագրի կետ 4.4-ում), վարչական անձնակազմի թվաքանակը կկազմի շուրջ 50-60, այլ օբյեկտներինը և ուղղություններինը՝ շուրջ 200: Այսպիսով, ԱՏԳ գործունեության միայն առաջին տարիների ընթացքում կազմակերպչի կողմից **կստեղծվի շուրջ 1500 նոր աշխատատեղ,** միջինը 180,000 դրամ աշխատավարձով:

Աղյուսակ 4. Կազմակերպչի կողմից ստեղծվող նոր աշխատատեղերը

	1-ին տարի	**2-րդ տարի**	**3-րդ տարի**	**4-րդ տարի**	**5-րդ տարի**
Նոր աշխատատեղերի քանակը (հիմնական)	120	780	1190	1320	1470

3.3. ԱՏԳ միջազգային ճանաչմանն ուղղված միջոցառումները և շահագործողների ներգրավումը

Կազմակերպչի կողմից ԱՏԳ ձևավորման սկզբնական փուլում՝ 2023-2027թթ. մարքեթինգային միջոցառումների իրականացման համար ընդհանուր առմամբ կներդրվի շուրջ 1.3 մլն ԱՄՆ դոլար կամ ընկերության եկամտի միջինում շուրջ 5-8%:

Աղյուսակ 5. Մարքեթինգային միջոցառումների ծախսերը, ԱՄՆ դոլար

	1-ին տարի	2-րդ տարի	3-րդ տարի	4-րդ տարի	5-րդ տարի	Ընդամենը
ԱՏԳ մասնագիտացված կայքի և լոգոյի ստեղծում	10000					**10000**
Մարքեթինգային ռազմավարության մշակում և վերանայում	20000	20000				**40000**
PR և մարքեթինգային միջոցառումներ (կոնֆերանսներ, պրեզենտացիաներ, ֆորումներ, ցուցահանդեսներ, համագործակցություն մասնագիտացված պրոֆեսիոնալ ԶԼՄ-ների հետ)	55000	180000	110000	160000	180000	**685000**
Գովազդային նյութերի տպագրություն	44000	81000	53000	60000	65000	**303000**
Գործարար կապերի հաստատում, այդ թվում պոտենցիալ շահագործողների հետ	40000	80000	60000	60000	60000	**300000**
Ընդամենը	**169000**	**361000**	**223000**	**280000**	**305000**	**1338000**

- **Մարքեթինգային ռազմավարություն**

«Մայլեռ» ԱՏԳ-ին անհրաժեշտ է նպատակային սեգմենտների՝ պոտենցիալ ճյուղային և այլ շահագործողների, ներդրողների, ներգրավված պետական գերատեսչությունների

ներկայացուցիչների և այլնի հետ մարքետինգային հաղորդակցության, կոմունիկացիաների դիվերսիֆիկացված կազմավորումը:

ԱՏԳ Կազմակերպիչն ԱՏԳ բրենդի առաջխաղացման գործընթացում սերտորեն համագործակցելով պետական մարմինների հետ՝ կիրականացնի հետևյալ միջոցառումները՝

- մասնագիտացված, պրոֆեսիոնալ ՁԼՄ-ների հետ համագործակցություն.
- պրոֆեսիոնալ ոլորտային համաժողովներին և ցուցահանդեսներին մասնակցություն.
- հանրային հաղորդակցության ուղիղ կապի ստեղծում (վեբկայք, ԱՏԳ մամուլի ծառայություն և ԱՏԳ տեղեկատվական ծառայություն).
- մասնակցություն տարբեր միջոցառումներին, ֆորումներին, համաժողովներին, ցուցահանդեսներին.
- հայկական և արտասահմանյան ոլորտային միավորումների և արդյունաբերական միությունների հետ փոխգործակցություն:

ԱՏԳ հանրային տեղեկատվական պատկերը կներկայացվի որպես շուկայական և վճարովի ենթակառուցվածքներ, որոնք թույլ են տալիս շահագործողներին Հայաստանում ստանալ գործունեություն ծավալելու համար մրցակից պետություններին չզիջող պայմաններ: Բացի այդ, մարքեթինգային մարտավարությունից առավելագույն արդյունք ստանալու համար մարքեթինգային նպատակները կհարմարեցվեն ԱՏԳ-ի կոնկրետ առանձնահատկու-թյուններին: Ընդ որում, հատուկ ուշադրություն կդարձվի ԱՏԳ առաքելության ձևավորմանը, նպատակային լսարանին, գնագոյացման հիմնական սկզբունքներին և մրցակցային առավելություններին, ԱՏԳ արդյունավետ դիրքորոշմանը՝ որպես շահագործողին գրավող հարթակի, որը նախատեսում է հարկային և այլ արտոնություններ և գործունեության հարմարավետ պայմաններ, ինչպես նաև լրացուցիչ ծառայությունների լայն համալիր կազմակերպությունների և դրանց աշխատակիցների համար:

Այս ամենը թույլ կտա «Մայլեռ» ազատ տնտեսական գոտում ստեղծել ճանաչելի բրենդ, միջազգային լսարանի մոտ ձևավորելու հստակ ճանաչելի երկրային ասոցիացիա, խթանելու «ԱՏԳ շահագործող»-ի կարգավիճակ ձեռք բերելու պահանջարկը՝ հայկական սփյուռքի և օտարերկրյա կազմակերպությունների ներգրավմամբ:

Աղյուսակ 6. Մարքեթինգային ռազմավարության իրականացման ժամանակացույց

Մարքեթինգային ռազմավարության միջոցառումները	**Իրականացման ժամանակաշրջան**				
	1-ին տարի	**2-րդ տարի**	**3-րդ տարի**	**4-րդ տարի**	**5-րդ տարի**
ԱՏԳ մասնագիտացված/հատուկ կայքի ստեղծում և գործարկում					
ԱՏԳ զարգացման մարքեթինգային ռազմավարության մշակում					
ԱՏԳ լոգոյի մշակում					
Գովազդային նյութերի նախապատրաստում և տարածում (բրոշյուրներ, պրեզենտացիոն նյութեր, տեղեկատվական-պրեզենտացիոն հոլովակներ և այլն)					
PR և մարքեթինգային միջոցառումների իրականացում ռազմավարության համաձայն (կոնֆերանսներ, պրեզենտացիաներ, ֆորումներ, ցուցահանդեսներ, մասնագիտացված պրոֆեսիոնալ ՁԼՄ-ների հետ համագործակցություն), այդ թվում միջազգային պրոֆիլային գործակալությունների ներգրավմամբ					
Մարքեթինգային ռազմավարության տարեկան ուղղումներ՝ կախված արդյունքներից, նպատակներից և առաջնահերթություններից					
Գործարար կապերի ստեղծում, պոտենցիալ շահագործողների ներգրավում					

- **Համագործակցություն ոլորտում հեղինակավոր միջազգային կազմակերպությունների հետ**

Անհատական մարքեթինգային մարտավարության ձևավորման համար կներգրավվեն որակավորված մասնագետներ և ԱՏԳ կոնկրետ հատվածի աշխատանքներում բարձրակարգ մարքեթինգային և գովազդային կազմակերպություններ:

- **Ազատ տնտեսական գոտու լոգոն, բրենդը (առևտրային նշան)**

Կազմակերպչի կարգավիճակ ստանալուց հետո ընկերությունը համագործակցելով վերոնշյալ կազմակերպությունների հետ կմշակի լոգո և կզբաղվի բրենդի հրապարակման ուղղությամբ:

ԱՏԳ շահագործողների ներգրավմանն ուղղված ռազմավարության առաջին մակարդակի առաջնահերթությունները կլինեն հյուրանոցային հանրահայտ ցանցերը, կացության կազմակերպմամբ, զվարճանքների, հանգստի և լեռնադահուկային ծառայություններով զբաղվող կազմակերպությունները:

ԱՏԳ-ում առաջին տարիներին համաշխարհային մասշտաբի երկու-երեք հայտնի (բրենդային) կազմակերպություններ առկայությունը հնարավորություն կտա ստեղծվելիք ԱՏԳ-ին պոտենցիալ պրոֆիլային շահագործողների (ներդրողների) աչքերում ձեռք բերել վարկունակ այնպիսի հիմք, որը հետագայում հնարավորություն կստեղծի Հայաստանում համապատասխան կլաստերների հաջող զարգացման համար:

Այս ուղղությամբ նպատակահարմար են համարվում և կիրականացվեն հետևյալ քայլերը՝

- Կազմակերպությունների և դրանց հիմնական պրոֆիլի ուսումնասիրությունը.
- Հայկական սփյուռքի ներկայացուցիչների (այդ թվում՝ այդպիսի կորպորացիաների բարձրաստիճան ղեկավարների) միջոցով ճյուղային կազմակերպությունների հետ աշխատանքի հնարավորությունների ուսումնասիրությունը.
- Բանակցություններում հետաքրքրված կազմակերպությունների short-list-ի կազմումը,
- Roadshow-ի անցկացումը առանցքային երկրներում.
- Կազմակերպությունների ներկայացուցիչների հետ անմիջականորեն և պրոֆիլային ներդրումային ֆորումներում մասնակցության ընթացքում և այլ միջոցներով կապերի հաստատում.
- Բանակցությունների անցկացումը և ԱՏԳ-ում կազմակերպությունների մասնակցության պայմանների սահմանումը:

3.4. Կազմակերպչի կողմից իրականացվելիք աշխատանքների ժամանակացույցը

ԱՏԳ ստեղծման և զարգացման հիմնական միջոցառումները	1-ին տարի				2-րդ տարի				3-րդ տարի				4-րդ տարի				5-րդ տարի			
Արագածոտնի մարզի Եղիպատրուշ համայնքում «Մայլեռ» ԱՏԳ ստեղծելու վերաբերյալ կառավարության որոշումը																				
Կազմակերպչի և Կառավարության միջև պայմանագրի ստորագրում																				
ԱՏԳ ներքին կանոնակարգող փաստաթղթերի կազմում և հաստատում (գործունեության կանոններ, անվտանգության պահանջներ և այլն)																				
Մարքեթինգային միջոցառումներ																				
ԱՏԳ լեռնադահուկային ենթակառուցվածքի ստեղծում																				
Շինարարական աշխատանքների (ճոպանուղիների, սահուղիներ և այլն) մեկնարկ և գործարկում																				
Ժամանցի համալիրների (ռեստորան, 2 հյուրանոց, սահադաշտ և այլն) շինարարական աշխատանքների մեկնարկ և գործարկում																				
Հյուրանոցի, որում առկա է խաղատուն, շինարարական աշխատանքների մեկնարկ և գործարկում																				
Բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ																				
Արտաքին ցանցերի, վարչական շինությունների, կոմունիկացիաների, անվտանգության համակարգերի, ներքին ենթակառուցվածքի, ճանապարհների կառուցում																				

4. ԱՏԳ գործունեության և զարգացման արդյունքները

4.1. ԱՏԳ գործունեության արդյունքում կանխատեսվող ներդրումները[6]

- **ԱՏԳ ծանրաբեռնվածության (հագեցվածության) աստիճանը**

ԱՏԳ գործունեության ընթացքում իրականացվելիք ներդրումների (չի ներառում կազմակերպչի կողմից կատարած ներդրումները) ծավալները կանխատեսելիս անհրաժեշտ է հասկանալ ԱՏԳ ծանրաբեռնվածության աստիճանը, այդ թվում՝ շահագործողների ներգրավման, ըստ ժամանակաշրջանի՝ հաշվի առնելով առկա պայմանավորվածու-թյունները, արդեն իսկ իրականացված աշխատանքները, ակնկալվող մարքեթինգային միջոցառումները և կանխատեսվող զբոսաշրջային հոսքերը:

Աղյուսակ 8. ԱՏԳ զբաղեցման նպատակային ուղենիշները

	Առաջին փուլ	Երկրորդ փուլ	Երրորդ փուլ
ԱՏԳ ծանրաբեռնվածության (հագեցվածության) աստիճանը	**15-18%**	**55%-65%**	**85%-100%**

- **Ներդրումների կանխատեսվող ծավալը**

Ընդհանուր առմամբ, ԱՏԳ պոտենցիալ շահագործողների և մասնակիցների ներդրումների ծավալները **(չի ներառում կազմակերպչի կողմից կատարած ներդրումները)**, կհամապատասխանեն դրանց զարգացման ռազմավարական ծրագրերին և ճշգրիտ կանխատեսման ենթակա չեն: Սակայն որոշակի գնահատականներ կարելի է տալ՝ հաշվի առնելով շահագործողների կանխատեսվող քանակը, ԱՏԳ ենթակառուցվածքների

[6] Այստեղ և այսուհետ ԱՏԳ գործունեության արդյունքները ներկայացված են ըստ ԱՏԳ ստեղծելու մասին ՀՀ կառավարության որոշման հաստատումից հետո երեք փուլերի կտրվածքով

զարգացման տրամաբանությունը, ընկերությունների ներդրումների միջին ծավալը ըստ ոլորտի, աշխատատեղերի քանակը և այլն:

Շահագործողների կողմից իրականացվող ներդրումները ակնկալվում են հիմնականում կացության կազմակերպման (հյուրանոցներ և այլն), սննդի կազմակերպման, զվարճանքի և հանգստի այլ օբյեկտների կառուցման և շահագործման ոլորտներում:

Աղյուսակ 9. ԱՏԳ-ում ներդրումների կանխատեսվող ծավալը, մլն դոլար

	Առաջին փուլ	**Երկրորդ փուլ**	**Երրորդ փուլ**
Ներդրումների ծավալը (աճողական)	44-53	160-190	248-292

Այսպիսով, առաջին փուլի ավարտին ներդրումների ծավալը կկազմի շուրջ 50 մլն ԱՄՆ դոլար, իսկ **երրորդ փուլի ավարտին ներդրումների ընդհանուր ծավալը կկազմի շուրջ 300 մլն ԱՄՆ դոլար**:

Համաձայն զբոսաշրջային հոսքերի կանխատեսումների, առաջին փուլի ավարտին ակնկալվում է, որ հանգստավայր **կայցելի օրական մինչև 20000 այցելու** ձմեռային սեզոնին: Հետևաբար, ԱՏԳ ենթակառուցվածքները պետք է բավարար լինեն այդքան այցելու միաժամանակ տեղավորելու, սպասարկելու համար:

Ըստ միջազգային պրակտիկայում ձևավորված փորձի 20000 այցելուի կացությունը ապահովելու համար **պետք է շուրջ 12-13 հազար հյուրանոցային մահճակալ**, քանի որ որոշ այցելուներ երկտեղանոց սենյակում գերադասում են մնալ միայնակ, իսկ որոշ այցելուներ առանց գիշերակացի են այցելում հանգստավայր: Ուստի անհրաժեշտ կլինի ԱՏԳ-ում կառուցել տարբեր չափերի առնվազն **80-100 հյուրանոց**: Հյուրանոցային տնտեսության մեջ շահագործողների ընդհանուր ներդրումները ակնկալվում են **շուրջ 256 մլն ԱՄՆ դոլարի** չափով:

Նույն տրամաբանությամբ տարածքում պետք է լինեն առնվազն 20-30 արագ սննդի կազմակերպման օբյեկտներ, ռեստորաններ, խոշոր ռեստորաններ: Կկառուցվեն նաև հանգստի և զվարճանքի այլ օբյեկտներ: Միայն սննդի կազմակերպման օբյեկտներում ներդրումները ակնկալվում են **շուրջ 18 մլն ԱՄՆ դոլարի չափով**:

4.2. Զբոսաշրջային հոսքերի կանխատեսումը

Կանխատեսվում է, որ զբոսաշրջիկ այցելուների ընդհանուր աճի տեմպը կկազմի միջինում 25% տարեկան և 18-րդ սեզոնին կհասնի շուրջ 761 հազարի: Ի դեպ, այդ զբոսաշրջիկների շուրջ 92%-ը կկազմեն օտարերկրացիները:

Գծապատկեր 5. «Մայլեռ» այցելող զբոսաշրջիկների ընդհանուր քանակը, հազ.



«Մայլեռ»-ում դահուկային սեզոնին մարդ-օրերի ընդհանուր թիվը շահագործման 10-րդ տարում կանխատեսվում է, որ **կհասնի շուրջ 1.8 մլն, իսկ 18-րդ սեզոնին՝ շուրջ 3.1 մլն**: Իսկ տեղական (ներքին) այցելուների ընդհանուր մարդ-օրերի թիվը 18-րդ սեզոնին կկազմի շուրջ 126 հազար:

Գծապատկեր 6. «Մայլեռ» այցելող օտարերկրացիների մարդ-օրերի քանակը, հազ.



Հարկ է նշել, որ տարածաշրջանային լեռնադահուկային հանգստավայրերը ներկայումս աշխատում են գերծանրաբեռնված, գները բավականին թանկ են և ոչ հանրամատչելի, այսինքն առկա է մեծ պահանջարկ և սահմանափակ հնարավորություններ: Միաժամանակ, ոչ առաջնակարգ հանգստավայրերում բարձրորակ ծառայությունների և կահավորված սահուղիների պակաս է զգացվում:

Նաև վերոնշյալով պայմանավորված ակնկալվում է, որ հանգստավայրի գործունեության առաջին փուլի ավարտին հանգստավայրը կունենա օրական 20000 այցելու ձմեռային սեզոնին:

4.3. Արտահանման կանխատեսվող ծավալները և ուղղությունները

Հաշվի առնելով, որ «Մայլեռ» ԱՏԳ-ն ունենալու է ծառայությունների մատուցման ուղղվածություն, մասնավորապես, զբոսաշրջային-ռեկրեացիոն, ուստի վերջինում արտահանումը լինելու է ծառայությունների տեսքով, քանի որ ապրանքների արտադրություն, հետևաբար, դրանց արտահանում չի նախատեսվում:

Բոլոր օտարերկրյա զբոսաշրջիկներին մատուցված ծառայությունները, ըստ ԱՄՀ վճարային հաշվեկշռի հաշվարկման մեթոդաբանության, համարվում են ծառայությունների արտահանում[7]: Ծառայությունների արտահանումը ոչ պակաս կարևոր տարր է վճարային հաշվեկշռում, քան ապրանքների արտահանումը: ՀՀ ծառայությունների արտահանման ծավալը (որոնց մեջ մեծ մասնաբաժին ունեն զբոսաշրջությունը և տրանսպորտային ծառայությունները) 2019թ. կազմել է շուրջ 2.4. մլրդ ԱՄՆ դոլար:

Աղյուսակ 10. ՀՀ ապրանքների և ծառայությունների արտահանումը 2015-2022 թթ., մլն ԱՄՆ դոլար[8]

	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Ապրանքների և ծառայությունների արտահանում	3137.7	3564.5	4410.4	4927.0	5794.4	3818.2	5011.9	9,698.5
Ապրանքների արտահանում	1623.9	1892.0	2387.6	2724.7	3360.7	2718.8	3276.6	5,521.4
Ծառայությունների արտահանում	1513.8	1672.5	2022.8	2202.3	2433.7	1099.3	1735.2	4,177.1

[7] https://www.imf.org/external/pubs/ft/bop/2007/pdf/bpm6.pdf
[8] https://minfin.am/hy/page/_hy_chart_/

Աղբյուր՝ ՀՀ ֆինանսների նախարարություն

Հիմք ընդունելով ծրագրի նախորդ կետում ներկայացված զբոսաշրջային հոսքերի կանխատեսումներն օտարերկրացի զբոսաշրջիկների մասով (1 հաճախորդի կողմից կատարվելիք միջին ծախսը համալիրում մնալու ընթացքում ամենահամեստ կանխատեսումներով կկազմի շուրջ 100000 դրամ)՝ կարող ենք փաստել, որ արտահանման ծավալները, աճելով միջինում շուրջ 23.1%-ով, հանգստավայրի գործունեության 18-րդ սեզոնից հետո նախնական հաշվարկներով **կկազմեն շուրջ 70 մլրդ ՀՀ դրամ**: Առաջին 18 սեզոնի ընթացքում արտահանման ծավալները միջինում կկազմեն շուրջ 30 մլրդ ՀՀ դրամ տարեկան:

Արտահանման հիմնական ուղղությունները, բնականաբար, կլինեն այն երկրները, որտեղից հիմնականում ակնկալվում է զբոսաշրջիկների հոսքը՝ առաջին հերթին Իրանը, Ռուսաստանը, ինչպես նաև ԵՏՄ և ԱՊՀ այլ երկրները, Մերձավոր Արևելքն, Արևելյան Եվրոպան: Առաջին փուլում երկրորդական ուղղություններ կարող են լինել Կենտրոնական Եվրոպան, Չինաստանը, Ճապոնիան, ԱՄՆ և այլն:

Աղյուսակ 11. ԱՏԳ արտահանման կանխատեսվող ծավալները, մլրդ ՀՀ դրամ

	Առաջին փուլ	**Երկրորդ փուլ**	**Երրորդ փուլ**
Արտահանման կանխատեսվող ծավալները	25-27	170-190	320-340

4.4. Նոր աշխատատեղերի կանխատեսվող քանակը

Նախնական կանխատեսումներով զբաղեցման վերոնշյալ տեմպերի դեպքում շահագործողները կապահովեն նոր աշխատատեղերի զգալի ծավալ: Աշխատատեղերի քանակը **(չի ներառում կազմակերպչի կողմից ստեղծվելիք աշխատատեղերը)** կանխատեսելիս հաշվի են առնվել **համապատասխան ոլորտների ընկերության աշխատատեղերի միջին քանակը և ԱՏԳ շահագործողների կանխատեսվող քանակը:**

Աղյուսակ 12. ԱՏԳ-ում նոր աշխատատեղերի ստեղծման կանխատեսում

	Առաջին փուլ	**Երկրորդ փուլ**	**Երրորդ փուլ**

Ստեղծվելիք նոր աշխատատեղերի կանխատեսվող քանակը	1500-1800	5700-6700	8900-10400

Գլոբալ միջազգային պրակտիկայի համաձայն՝ կացության կազմակերպման և հյուրանոցային տնտեսությունում յուրաքանչյուր **հյուրանոցի սենյակի սպասարկմանը ներգրավված է միջինում մեկ աշխատող**: Բազային զբոսաշրջության ոլորտում մեկ աշխատատեղն **ստեղծում է մոտ մեկուկես լրացուցիչ (անուղղակի) աշխատատեղ** զբոսաշրջության հետ կապված տնտեսությունում: Բացի այդ, երեք աշխատեղ, որոնք անուղղակիորեն կախված են հյուրանոցներում աշխատող յուրաքանչյուր անձից, ինչպիսիք են զբոսաշրջային գործակալության աշխատակիցները, զբոսավարները, տաքսիների և ավտոբուսների վարորդները, սննդի և խմիչքների մատակարարները, լվացքատան աշխատողները, տեքստիլ ոլորտի աշխատողները, այգեպանները, հուշանվերների խանութի աշխատակիցները, ինչպես նաև օդանավակայանի աշխատակիցները[9]:

Մյուս կողմից հյուրանոցների անձնակազմի քանակը մեծապես կախված է հյուրանոցի կարգավիճակից: Միավորված ազգերի համաշխարհային զբոսաշրջային կազմակերպության (UNWTO) համաձայն՝ երեքաստղանի հյուրանոցում 10 սենյակի համար անձնակազմի օպտիմալ թիվը՝ 8 հոգի է, չորս աստղանի հյուրանոցում՝ 12 հոգի, հինգաստղանի հյուրանոցում՝ 20 հոգի[10]:

Այս հաշվարկի համաձայն՝ միայն հյուրանոցների անձնակազմն առաջին փուլի ավարտին **կհասնի ավելի քան 10000 աշխատակցի**: Այս աշխատատեղերի ստեղծման ազդեցությամբ ԱՏԳ-ում և հարակից բնակավայրերում կբացվեն ևս շուրջ 14000-15000 լրացուցիչ (անուղղակի)[11] նոր աշխատատեղեր:

Արագ սննդի օբյեկտներում և ռեստորաններում միջինում աշխատում է 20-50 աշխատակից՝ կախված օբյեկտի չափերից և կարգից:

Այսպիսով, ԱՏԳ գործունեության առաջին փուլի ավարտին ընդհանուր առմամբ շահագործողների կողմից կստեղծվի ավելի քան 10000 նոր աշխատատեղ, ինչն իր հերթին

[9] https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_dialogue/---sector/documents/publication/wcms_329309.pdf
[10] https://unstats.un.org/unsd/publication/Seriesm/SeriesM_83rev1e.pdf
[11] https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_dialogue/---sector/documents/publication/wcms_329309.pdf

կնպաստի **առնվազն 14000-15000 լրացուցիչ (անուղղակի) նոր աշխատատեղերի** ստեղծմանը:

4.5. Ծրագրի սոցիալ-տնտեսական և բնապահպանական ազդեցությունը

- **Սոցիալ-տնտեսական ազդեցությունը**

Կազմակերպիչը որպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գաղափարի կրող ձգտելու է, որ ծրագրի իրականացումը հնարավորինս մեծ դրական սոցիալ-տնտեսական ազդեցություն ունենա հարակից համայնքների վրա: Դրական ազդեցությունն ակնկալվում է մի քանի ուղղությամբ.

- ✓ Խոշորածավալ ներդրումների իրականացում՝ **շուրջ 310-360 մլն ԱՄՆ դոլար *(կազմակերպչի և շահագործողների կողմից ներդրվելիք)***;
- ✓ Հարկերի և տուրքերի, այդ թվում տեղական, վճարում;
- ✓ Արտահանման խթանում. միայն առաջին փուլի ընթացքում ակնկալվում է 25-27 մլրդ դրամի արտահանման ծավալների ապահովում;
- ✓ Հիմք ընդունելով հանրապետությունում ծառայությունների ոլորտի կողմից ստեղծվող ավելացված արժեքի միջին տեսակարար կշիռն իր ծավալի նկատմամբ՝ գնահատվում է, որ համալիրի շահագործմամբ կստեղծվի տարեկան **շուրջ 12-13 մլրդ դրամ լրացուցիչ ավելացված արժեք**, որն այլ հավասար պայմաններում կնպաստի ՀՆԱ-ի աճին մոտ 0.2 տոկոսային կետով: Արդյունքում պետական բյուջե կվճարվեն **ավելի քան 1.2 մլրդ դրամ հարկեր**;
- ✓ Համայնքի մեծածավալ հողատարածքների վարձակալություն, ինչը **դրական ազդեցություն կունենա համայնքային բյուջեի վրա**;
- ✓ Նոր ենթակառուցվածքների ստեղծում և զբոսաշրջային հոսքերի խթանում (հատկապես մարզում). Հարկ է նշել, որ Արագածոտնի մարզում 2021թ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը կազմել է ընդամենը 8-ը[12] (ամբողջ ՀՀ-ում՝ 915);
- ✓ Համայնքում և մարզում **գործազրկության մակարդակի նվազում**. հարակից համայնքների բնակիչները կներգրավվեն ծրագրի իրականացման և հետագա

[12] https://www.armstat.am/file/doc/99533598.pdf

զարգացման գործընթացներին: Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ ՎԿ տվյալների՝ Արագածոտնի մարզում գործազրկության մակարդակը 2020-21թթ. կազմել է համապատասխանաբար 10 և 6.7 տոկոս: Այդ ժամանակահատվածում գործազուրկ են եղել համապատասխանաբար 5.5 և 4.0 հազար մարդ, որոնցից 4.1 և 3.4 հազարը՝ գյուղական համայնքներում[13]: Միաժամանակ, մարզում միջին ամսական անվանական աշխատավարձը 2022թ. արդյունքներով կազմել է ընդամենը 141,398 դրամ[14], ինչը ՀՀ մարզերի մեջ ամենացածր ցուցանիշներից մեկն է (ԱՏԳ-ում միջին աշխատավարձը կազմելու է առնվազն 180,000 դրամ):

Ընկերությունը կօգտագործի հարակից համայնքների աշխատուժը և արտադրանքը: Բոլոր աշխատողները կստանան սոցիալական երաշխիքներ, առողջության ապահովագրություն: Վերոնշյալը կնպաստի համայնքների զարգացմանը, արտագաղթի և ուրբանիզացիայի նվազեցմանը:

Հաշվի առնելով, որ ծրագրի իրականացման հետագա փուլերում նախատեսվում է ընդլայնել համալիրը՝ ներառելով այլ ծառայություններ ևս, վերը նշված ցուցանիշները մի քանի անգամ կաճեն:

- **Բնապահպանական ազդեցությունը**

Ծրագիրը կիրականացվի բնապահպանական բոլոր կանոնների պահպանմամբ: Կազմակերպիչը կապահովի ԱՏԳ ամբողջ տարածքի բնապահպանական անվտանգությունը: Անհրաժեշտության դեպքում կապահովվի բնապահպանական փորձագիտական համապատասխան եզրակացության առկայությունը: Բոլոր օբյեկտները, որոնք գտնվում են ԱՏԳ տարածքում, կբավարարեն սանիտարական, հակահրդեհային, բնապահպանական և այլ սահմանված նորմերին: Կմշակվի արտակարգ իրավիճակների դեպքում տարհանման պլան՝ շահագործողներին համապատասխան տեղեկատվության տրամադրմամբ (տեղեկատվական ստենդեր և այլն): Անհրաժեշտության դեպքում ԱՏԳ-ում անվճար կհատկացվի տարածք (50մ^2 ոչ պակաս) բնապահպանական նորմերի և պահանջների ապահովման նպատակով՝ անհրաժեշտ ստուգաչափիչ սարքավորումների տեղադրման

[13] https://www.armstat.am/file/doc/99533598.pdf
[14] https://www.armstat.am/file/article/sv_01_23a_142.pdf

համար: Բացի վերոնշյալից պետք է նշել նաև, որ ԱՏԳ տարածքը կբարեկարգվի և կկանաչապատվի:

5. Պետության կողմից ակնկալվող աջակցությունը

Պետության մասնակցությունն ԱՏԳ ձևավորման մեջ առաջին հերթին ակնկալվում է ԱՏԳ առաջմղմանն աջակցության ոլորտում: Երկրի զբոսաշրջային և ընդհանուր առմամբ ծառայությունների զարգացման ռազմավարության շրջանակներում ԱՏԳ մեխանիզմների ստեղծման բացառիկության տեսակետից նպատակահարմար է պետության և ԱՏԳ Կազմակերպչի միջև առավելագույն սերտ համագործակցությունն ԱՏԳ բրենդի, «Մայլեռ» հանգստավայրի և մատուցվող ծառայությունների առաջմղման շրջանակներում:

Նախ և առաջ անհրաժեշտ է **պետական պաշտոնական կապերի** (տեղեկատվական, դիվանագիտական և այլն) լիակատար օգտագործումը գործընկեր պետությունների համապատասխան կառույցների ԱՏԳ վերաբերյալ (մասնագիտացման ոլորտը, առավելությունները, պայմանները և այլն) տեղեկացնելու համար:

Պետության տեղեկատվական օժանդակությունը կարող է նաև ներառել՝

- օտարերկրյա պետությունների համապատասխան կազմակերպությունների հետ աշխատանքը,
- պոտենցիալ շահագործողների համար Հայաստանի երկրի պրոֆիլի պատրաստումը,
- ԱՏԳ-ի վերաբերյալ տեղեկատվություն հասցնելու նպատակով դեսպանությունների առևտրային (կոմերցիոն) բաժինների մասնակցությամբ շնորհանդեսները,
- ոլորտային նախարարությունների պաշտոնական տեղեկատվական գրությունները օտարերկրյա գործընկերներին,
- կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների մասնակցությամբ հանդիպումները տեղական և արտասահմանյան գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ,
- ՁԼՄ-ների հաղորդագրությունները,
- ԱՏԳ-ի մասին գործընկերների տեղեկացումը պաշտոնական այցերի ընթացքում,
- սփյուռքի ներգրավումը:

Համագործակցության առաջարկված այս ուղղություններով պետության կողմից ֆինանսական միջոցների տրամադրում չի նախատեսվում, ինչը դարձնում է պետական մասնակցությունը իրատեսական և արդարացված:

Բացի այս, ոչ ծախսատար աջակցությունից Կազմակերպիչը կողջունի պետության կողմից մասնակցությունն առաջնային ենթակառուցվածքների ձևավորման մեջ, քանի որ այն խթանելու է ոչ միայն ԱՏԳ գործունեությունն, այլև մարզի և շրջակա բնակավայրերի զարգացումը: Պետության աջակցությունը իրենից կարող է ենթադրել Կառավարության կողմից վարչարարական գործիքակազմի օգնությամբ ծրագրի ընթացքում ի հայտ եկող խնդիրներին օժանդակություն՝ առանց ֆինանսական ռեսուրսի օգտագործման (բանակցությունների վարում, օրենսդրական փոփոխությունների նախաձեռնում և այլն): Այսպես, Կազմակերպիչը հայցում է պետության աջակցությունը հետևյալ ենթակառուցվածքների ձևավորման գործում.

- **Ճանապարհ**

Ճանապարհի կառուցումը կվերացնի անհարմարությունները այն զբոսաշրջիկների համար, որոնք ուղևորվելու են Հայաստան իրենց ավտոմեքենաներով, բացի այդ, կբարձրանա շրջանի նկատմամբ գրավչությունը թե՛ զբոսաշրջիկների, թե՛ ներդրողների կողմից: Հարկ է նշել, որ սույն ճանապարհի կառուցումը արդեն իսկ ներառված է ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 29-ի N 1246-Ա որոշման 6-րդ կետում և արդյունքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի «Մայլեռ» հանգստավայրի ասֆալտապատ ավտոճանապարհի կառուցման ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 2023 թվականի ապրիլի 13-ի N 535-Ա որոշմամբ:

- **Կոմունալ ենթակառուցվածքներ (ջրամատակարարում, էլեկտրաէներգիա, գազամատակարարում, ջրահեռացում)**

Կոմունիկացիաների անցկացումը (գոնե մինչև ԱՏԳ սահմանները) կազատի ընկերությանը տարբեր փաստաթղթային քաշքշուկներից: Միաժամանակ, կոմունիկացիաների բացակայության խնդիրը արդիական է նաև հարակից համայնքների համար, և դրանց անցկացումը դրական ազդեցություն կունենա նաև նշված համայնքների

վրա: Հարկ է ընդգծել, որ ակնկալվող աջակցությունը պետական ֆինանսական ռեսուրս չի պահանջում, այլ ենթադրում է Կառավարության կողմից իր լիազորությունների շրջանակում առկա գործիքակազմի միջոցով բանակցությունների վարում կամ այլ աշխատանքների իրականացում կողմերի հետ՝ կոմունալ ենթակառուցվածքների կառուցմանն աջակցության նպատակով:

6. Կազմակերպչի կողմից տրամադրվող ծառայությունների ցանկը և սակագները

Աղյուսակ 13. Կազմակերպչի կողմից տրամադրվող ծառայությունները

Ծառայության անվանումը	Գինը, ՀՀ դրամ	Մեկնաբանություններ
Տարածքների վարձակալությամբ տրամադրում	Պայմանագրային	Կախված վարձակալվող տարածքի չափից և վարձակալության ժամկետից՝ վարձակալության գինը կարող է փոփոխվել: Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ գնաճի համապատասխան:
Տարածքների վաճառք	Շուկայական գների համապատասխան	Կախված վաճառվող տարածքի չափից և գինը կարող է փոփոխվել:
Գրասենյակային տարածքների վարձակալությամբ տրամադրում	Պայմանագրային	Կախված վարձակալվող տարածքի ծավալից/չափից և վարձակալության ժամկետից վարձակալության գինը կարող փոփոխվել: Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի՝ գնաճի համապատասխան:
Ժամանակավոր պահպանության պահեստի վարձակալությամբ տրամադրում	Պայմանագրային	
Կոմունալ ծառայություններ (էլեկտրաէներգիա, ջուր, ջրահեռացում	Ծառայության մատակարարների սակագների համապատասխան	

(կոյուղի), գազամատակարարում)		
Գերարագ ինտերնետ, հեռախոսաֆիկացում	Ծառայության մատակարարների սակագների համապատասխան	
Տարածքի մաքրում և բարեկարգում	Ընդգրկված է վարձակալության գնի մեջ	
Տարածքի ընդհանուր մաքրում	Պայմանագրային	
Տարածքի շուրջօրյա պահպանություն	Ընդգրկված է վարձակալության գնի մեջ	
Ավտոկանգառ (պահպանվող) ԱՏԳ շահագործողների աշխատակիցների մարդատար մեքենաների համար 1 մեքենատեղ (արտոնյալ սակագին)	Մինչև $30/ամիս	Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի ՝ ՀՀ-ում իրական արժեզրկմանը համապատասխան:
Ավտոկանգառ (պահպանվող) հյուրերի մեքենաների համար 1 մեքենատեղ	$0,5/ժամ	Կազմակերպչի կողմից գները կարող են փոփոխվել յուրաքանչյուր տարի գնաճի համապատասխան
Վարձակալվող պահեստային տարածք (ք.մ. ամսական)	Պայմանագրային	Լոգիստիկ և արտադրական կառույցներ բոլոր ենթակառուցվածքներով
Նախամշակված վարձակալվող հողատարածք (ք.մ. ամսական)	Պայմանագրային, հաշվի առնելով կատարված աշխատանքները	
Նախամշակված վաճառվող հողատարածք (ք.մ.)	Պայմանագրային, հաշվի առնելով կատարված աշխատանքները	Ներառում է լիակատար ենթակառուցվածքների ամբողջություն, հավասարեցված հող՝ հարմար

		արտադրական և լոգիստիկ շինությունների տեղակայման համար
Օժանդակություն շահագործող դառնալու համար (առանձին յուրաքանչյուր նոր շահագործողի համար)	Պայմանագրային	
Գործարար օժանդակ ծառայություններ	Պայմանագրային	Կորոշվի շահագործման փուլում, կախված ծառայությունների ծավալից և ձևից
“Կենտրոնացված ընդունելության” ծառայություններ	Ընդգրկված է վարձակալության գնի մեջ կամ պայմանագրային	
Շահագործողների համար նախագծման, շինարարական, կառուցապատման ծառայությունների մատուցում	Պայմանագրային	Կախված ծառայությունների ծավալից և ձևից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ